

թեան վրայ պատմական տեսութիւնք և ծանօթութիւնք, որոյ քննիչն էր կ. Ս. իւթիւնեան էֆէնտի:

2. Տասն (10) օսմ. ոսկի Հայք յԵղիսաբերուապոյի Դրանիլիվանիոյ անուն գործը վեր. Գրիգոր վ. Գովլրիկանի ի միաբանութենէ Միխիթարեանց վիեննայի, որոյ քննիչն էր Գեր. Տ. Մ'ելքիսեդեկ Արքեպիսկոպոս:

3. Տասն (10) օսմ. ոսկի Հայ բոշաներ անուն գործը Պ. Գրիգոր Խ.

Վանցեանցի յԱխալքալաք, որոյ քըննիչն էր Մ. Ազարէգեան էֆէնտի:

4. Տասն (10) օսմանեան ոսկի՝ Անգիր դպրութիւն և Առակը անուն գործը՝ Արժ. Վահան վ. Տէր Մինասեանի, որոյ քննիչն էր Մ. Ականազ էֆէնտի:

Իսկ Դիւնան եկեղեցական պատմութեան Հայոց կամ Միմեռն կարողիկոսի յիշատակարանը անուն գործը Արժ. Տ. Գիւտ Ազանեանց քահանայի ի Տփղիս, և Ազդարան նոր պատմութեանց անուն գործը Պ. Ռոստոմ-Բէդ Երզնկեանց Հազրատեցւոյ, երկու կարեւոր աշխատասիրութիւնքն մնացին գալ տարւոյ քննութեան եւ մրցման:

Այս տարի մրցանակի արժանի չը-Համարուած գործերն են հետեւեալք.

Ա. Հայք և Դիցաբանութիւն Հայոց, գործ վեր. Սահակ վ. Նազարէթեանի, և քննադատեալ յԱրժ. Տ. Եղիշէ Ծ. վ. Դուրեանէ՝ « իրբեւ գործ զուրկի ի գիտական նշութեանց եւ ի գրական ուահանջմանց » :

Բ. Պատմութիւն հայ յրագրութեան, գործ վեր. Գրիգորիս վ. Գալէմքէրեանի, քննադատեալ ի կ. Ս. իւթիւնեան էֆէնտիէ եւ նկատեալ կիսկատար գործ:

Գ. Ցուցակ Հայերէն ձեռագրաց վիեննայի եւ Մինիսէնի կայս. Մատենադարանաց, գործ վեր. Միարանից Միխթարեանց վիեննայի:

Դ. Կենսագրութիւն Պետրոս Դուրքեանի գործ Տ. Հմայեակ Էնքսէրենեանի. Նկատեալք իրբեւ ոչ յարմարագոյնք տրամադրութեանց իզմիրեանց կուակին:

Մոյն գրական հանդէսն այս տարի թէպէտ անշուք կերպի կատարեցաւ, այս միջոցիս պատահած աղետալի երկաշարժին պատճառաւ, բայց գարձեալ օրհնութեամբ յիշաակեցաւ անուն կտակարար բարերարին Պ. Յովսէփայ իզմիրեանց Դզմարեցւոյ:

ԱՐՈՂՁԱԲԱՆԱԿԱՆՔ



Գիրութիւն. — . Գիրութիւնն է հեւանդագին վիճակ մի, որ ոչ միայն մարդու ձեւն կ'այլակերպէ և առողջութեան գէմ կ'սպառնաց, այլ նոյն իսկ կեանքը կը համատօնէ: Ճարապային կոյտն և առանձին կերպով սրտի ճարպըն կը փսամէ գնդերաց. և սրտի գործողութիւնը կը դանդաղեցընէ որով. և արեան շրջանն կը դանդաղի:

Գիրութիւնն յաճախ յառաջ կուգայ հիւանդ արամադրութենէ քան իթէ

մննդառութենէ զոր լաւ չեն ըմբռներ ոմանք իրը թէ զայն կ'աճեցընեն պարարտ կերակուրք և անհամեմատութիւն՝ ի մէջ ջրածխատից և բնասպիտակ գոյացութեանց:

Ասոր առաջը առնդու համար կը ընանք թէ շատ բժշկական միջոցներ գործադրել և թէ առողջապահական զգուշութիւններ բանեցընել: Բայց սոտոգիւ և առանց փասելու առողջութեան այս բանիս մէջ յաջողելու հա-

մար հարկ է կրկին միջոցներն աղ գործադրել, այսինքն առաջըլապահաւ կանը և բժշկականը,

Բժշկութեան երկարժամանակեայ փորձը ցուցուց թէ, երկու բուսական դեղք կան 'ի գարման գիրութեան, և են. *Ficus vesiculosa* և *Phytolacca decandra*. Եւ եթէ զատով յա կերպով խառնենք՝ յառաջ կուգոյ պանչ չելի դեղմի՝ զոր Պ. Սօսէր նմանաւ րոյժ բժիշկն 'ի գենուա կը ծախէ զնդակի ձեռվ և զոր կոչեր է *Ficus phytolaccea*—*Sauter.*

Այս գեղս գործածելու միջոց տասն կամ տասնումեկ օր անգամ մը հարկ է նուազեցնել անոր կշխոքը, և եթէ տասուերկու օրուան մէջ հասնի մինչև չ քիլոցէն կէս պակաս, այն ատեն օրական շափն աղ իջեցնելու է մէկ կամ երկու գնդակ պակաս առնդզ։ Այս գեղէն զատ առողջապահական այլ ևս միջոցներ բանեցնելու է, զոր օրինակ մարմնամարզ, որ անհրաժեշտ է, և քանչառող անձանց իսկ կարելոր։ Դարձեալ, օրուան մէջ երկու կամ եւ բեք անգամ հարկ է ձեռվ կամ հետիւսա շրջագայութեան ենել բացօս թեայ տեղեր։

Տաք բաղնիք ևս մեծապէս կ'օգտեն։ իսկ կերակրոց շատ մեծ ուշագրութիւն հարկաւոր է. պէտք է զգուշանալ 'ի ջրաբնածխական և ճարպային կերակրոց, օրինակ իմն հաց, շաքարեղէն, խմորեղէն, ընկոյզ, նուշ, չիորութ, կարագ, և այլն։ Ըմպելիք ևս առատօրէն պէտք չէ առնուլ։ — ի հսկառակէն կերակուրները պիտի ըլլան անձարպ միս խորովեալ, եզան կամ հորթու կամ ոչխարի։ Թոյլ արրուած են երբեմն և աղեալ միս, բայց ոչ երբէք հաւեղէնք և սագք։ իսկ ձկանց մէջ զգուշանալու է ճարպային պարարտներէն, մասնաւորապէս օձաձէն։

Գալով կանաչեղինաց, ոսկեխնձոր, շոմին, աղցան և ջրկոտեմն շատ օգտակար են. բայց զգուշանալի են գետ-

նախնձոր, շագանակ, բրինձ, կարմիր բողկ, ստեղին, և այլն։ Պառողք կրնան ուսութիւն եթէ են իբրև չամիչ, խնձոր, և նարինջ։

Կաթին աերը առնուած խմելու է. մոխ ջուր սակաւաքանակ առնդու է և ոչ պարարտ։ Հաւկիթ ալ կրնայ ուսութիւն երբեմն, բայց գարեջուր գինի և ըմպելիք բացարձակա պէս արգերեալ են։ Անդանի վրայ գաւաթ մի ջուր կամ գինի և կամ բաւես խնձորողի (օճաք) բաւական է, Շատակի ծարաւոյ ժամանակ թեթև սև ջուր առնուը լաւագոյն է։

Թգտակար են ևս թարցպատի կամ եղանուի. ջրերն սովորական շափով։

Եթէ այդ կանոնադրութիւնն ճշգիւ գործադրութն, գէր մորմինն թրը առ վարական ձեն կ'առնաւ, շնչարգելութեան երեսոյթներն կ'անհւատանաւ, և զօրութիւն կ'զգենոր սովոր. և վախար ուղի գէրն։

* * *

Գիտել շիտակ կամ հակեւունակմով, և գիտնականաց մէջ շատ վիճաքանութեանց առիթ եղած է այս խրնկ գիրս։ Յամի 1863 ֆասդնէր հակեալ մարմնով գրելու հակառակեցաւ պատճառ բրերելով թէ այդ՝ աշակերտաց ծուռ կեցուածքին ծագութիւն կուտայ և յորմէ ուրիշ հետեանքներ ալ յառաջ կու գան, օրինակ իմն կարճատեսաւթիւն և ողնայարի տձեւ ծուռթիւն։ Եւ վերոյիշեալ թուականէն սկսեալ զանազան կարծիք երկան եղան, յորոց ունակ շիտակ գրութիւն շիտակ թըլթոյ վրայ կը պաշտպանէն, իսկ այլք ծուռ թղթոյ վրայ հակեալ մարմնով գրել կը վերագասէն։ Բայց կերմանիոյ վարժարանաց մէջ շիտակ մարմնով գրելու օրէնքն դրուելէ յետոյ՝ այս խնդիրն գործնական կերպարանք մ'առաւ, այսինքն, գիտնականք սկըսան համեմատել իբրարու հետ երկու կերպ գրութեանց տուած արգասիք-

ները : Յուրիկի մէջ ևս նմանօրինակ փորձեր կատարուեցան, ուր նաև առամանակեայ օրէնք գրուեցաւ շիտակ գրութեան . և ապա բժշկաց յանձնածողով մի կազմուելով՝ յամի 1891-1892 քննութեան ենթարկուեցան 628 աշակերտք եթէ մանչ և եթէ աղջիկ, որոց 378 սովորական կերպով, այսինքն հակեալ մարմնով և այլ և այլ գիրք թղթով կը գրէին, և 250 շիտակ կերպով կը գրէին : Որիզման բժշկապետն իրենց այդ քննութեանց վերջնական վճիռն ներկայացուցին Յուրիկի առողջաբանական ընկերութեան, և այդ վճիռն էր 'ի նպաստ շիտակ գրութեան : Վասն զի ըստ այսմ վճռոյ՝ հակեալ մարմնով գրոպաց մեծ մասն, այսինքն 65% իրենց մարմնոյն շափակցութիւնը կորսնցուցեր էին, մինչդեռ նոր կերպով գրոպաց 25% միայն այդ թերութիւնը ունեցեր էին :

Իսկ գալով ողնայարի կորութեան և այսց մերձաւորութեան առ թուղթըն, (որ կարձատեսութեան պատճառ կ'ըլլայ), հակեալ մարմնով գրելու կերպն՝ աւելի նպաստաւոր ար-

դիւնք ունեցած է, միայն թէ թուղթը դրուի աշակերտին աջ կողմը : Սակայն նոյն Ռիփման կ'ըսէ թէ շիտակ գրութեամբ ալ նոյն նպաստաւոր արդիւնք կրնան յառաջ գալ եթէ գրասեղանի գագաթնահայեաց հեռաւորութիւնը գրողին մարմնէն աւելի ըլլայ . քան զսովորականն : Արդ ըստ բուն յանձնաբարութեան վերցիշեալ յանձնաժողովոյն՝ շիտակ և կանգուն մարմնով գրութիւնն վերադասելի է միշտ առողջաբանական տեսակետով :

Ուստի և յայտնի է գործնականապէս ճշգութիւն գէորգ Սանդի ստվորական առածին : « Գրութիւն շիտակ, թուղթ շիտակ, մարմին շիտակ »:

Եւ Յուրիկի մէջ եղած փորձերուն համեմատ՝ վայելագրութիւնն և արագագրութիւնն ալ այդ կերպով լաւ արդիւնքներ կ'ունենան :

Եւ 'ի Գենուա եթեկտրաւ նմանարայժ բժշկաց ընկերութեան Նախագահն Մ. Խօսէ առողջապահական դիտման նոյն քաղքին ուսումնարանաց մէջ շիտակ գրութեան կերպը հաստատեց, զոր և կը յանձնաբարէ ամենայն վարժարանաց աեսուչներուն :

